ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«05» 01 2024 թ. N 5-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ԹԻՎ 55-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 55-Լ հրամանով հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 35.2-րդ կետով.

«35.2. Կոմիտեի կենտրոնական մարմնի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունն իր իրավասության սահմաններում՝

1) կազմակերպում և իրականացնում է նախաքննություն՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 151-րդ, 152-րդ, 308-317-րդ, 320-րդ, 321-րդ, 326-330-րդ, 349-րդ, 350-րդ հոդվածներով, 42-րդ գլխով և 469-471-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների դեպքերով, ինչպես նաև Կոմիտեի նախագահի կողմից իրեն հանձնարարված քրեական վարույթներով.

2) մշակում և վերադասին է ներկայացնում առաջարկություններ Կոմիտեի՝ իրեն վերապահված գործունեության ոլորտում աշխատանքների կազմակերպման և իրականացման, դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ.

3) առաջարկություններ է ներկայացնում Կոմիտեի գործունեությանն առնչվող ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

4) ապահովում է իր ենթակայության վարույթներով առանձնապես ծանր կամ հասարակական հնչեղություն ունեցող հանցագործության դեպքերի մասին Կոմիտեի նախագահի իրազեկումը.

5) ստորաբաժանմանը վերապահված լիազորությունների պատշաճ կատարման նպատակով՝ ապահովում է համագործակցությունը Կոմիտեի այլ ստորաբաժանումների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների հետ.

6) մասնակցում է Կոմիտեի նախագահի հրավիրած խորհրդակցություններում մարմնի աշխատանքների կազմակերպման և իրականացման ընթացքին առնչվող հաշվետվությունների և հարցերի քննարկմանը.

7) իր ենթակայության վարույթներով նախաքննություն իրականացնելիս նպաստում է սահմանադրական կարգի, պետության, հասարակական անվտանգության և կառավարման կարգի ամրապնդմանը.

8) Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում իրականացնում է այլ գործառույթներ:»:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, մամուլի քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ